ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ ԱՄ-ԷԱՃԾՁԲ-24/03» ծածկագրով **«աուդիտորական ծառայության»** ձեռքբերման
գնման ընթացակարգի
«Հրավերի վերաբերյալ պարզաբանում տրամադրելու նիստի»

ք. Արմավիր **«15» հունվար 2024 թ**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ա.Հակոբյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Համբարձումյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ

Ս.Սաֆարյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար

Ա.Պողոսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության ավագ մասնագետ

1. Հրավերի վերաբերյալ պարզաբանում տալու մասին

1.1 **«ՀՀ ԱՄ-ԷԱՃԾՁԲ-24/03»** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ 12.01.2024 թ. ստացվել է հետևյալ հարցադրումը.

Հարցադրում 1

Հարգելի՛ գնահատող հանձնաժողով ՀՀ ԱՄ-ԷԱՃԾՁԲ-24/03 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի թիվ 1 հավելվածի 5-րդ կետում՝ (ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱՏԱՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ) նշված պահանջները մեր կարծիքով հիմանականում հակասում է ՀՀ Ֆինանսների Նախարարի 15.07.2020թ. N 204-Լ՝ « ՀՀ Հանրային հատվածի ներքին աուդիտի ծառայության ձեռք բերման համար գնման հայտում ներառվող բնութագրի ներկայացվող պահանջները հաստատելու մասին» հրամանով սահմանված պահանջներին:Նույն հակասությունը կրկնվել է այլ մարզպետարանների աշխատակազմերի կողմից հրապարակված ընթացակարգերում,սակայն հարցումիվ հետո հակասող պահանջները վերանայվել և ընդհանրապես հանվել են:Մասնավորապես՝ 1) աուդիտորները պետք է ունենան աուդիտի ոլորտում (ներքին և (կամ) արտաքին) մասնագիտական գործունեության առնվազն 5 տարվա փորձ, համատեղությամբ չաշխատեն ներքին և/կամ արտաքին աուդիտի ծառայություններ մատուցող այլ կազմակերպություններում, կամ այլ կազմակերպություններում աշխատեն որպես ներքին աուդիտոր և վերոնշյալ աուդիտորներից առնվազն մեկը պետք է ունենա գնումների համակարգողի որակավորման աստիճան,առնվազն մեկն էլ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման օրենսդրության իմացությամբ և հանրային հատվածի հաշվապահի որակավորման աստիճան:2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմում և ենթակա կազմակերպությունների 2024 թվականի տարեկան ծրագիրը» աղյուսակի «Աուդիտորական խմբի անդամների քանակը» սյան մեջ նշված է պահանջվող աշխատակիցների կոնկրետ թվաքանակ ՝ 7 աշխատակից: Վերջինիս մեր կարծիքով նույնպես հակասում է ՝ ՀՀ Ֆինանսների Նախարարի 15.07.2020թ. N 204-Լ՝ « ՀՀ Հանրային հատվածի ներքին աուդիտի ծառայության ձեռք բերման համար գնման հայտում ներառվող բնութագրի ներկայացվող պահանջները հաստատելու մասին» հրամանով սահմանված պահանջներին:Մասնավորապես՝ վերոհիշյալ նորմատի իրավական ակտի 5-րդ կետով՝ (ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱՏԱՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ) սահմանված աշխատանքային ռեսուրսների թվաքանակի ՝ 7-աշխատակից մասին՝ կոնկրետ նշում գոյություն չունի: Վերոհիշյալ անհամապատասխանության վերաբերյալ խնդրում ենք տրամադրել համապատասխան պարզաբանում:

ԱՄ-ԷԱՃԾՁԲ-24/03» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ 12.01.2024 թ. ստացված հրմանը տրամադրել պարզաբանում հետևյալ բովանդակությամբ՝

Պարզաբանում 1

Հարգելի մասնակից Ձեր կողմից ուղարկված պարզաբանմանը ի պատասխան,տեղեկացնում ենք, որ այն քննարկվել է և օրենսդրությանը համապատասխան փոփոխության է ենթարկվել,մասնավորապես հրավերի տեխնիկական բնութագրի թիվ 1 հավելվածի 5-րդ կետի (ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱՏԱՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ) բ) ենթակետում կատարվել է հետևյալ փոփոխությունը,ըստ ՀՀ Ֆինանսների Նախարարի 15.07.2020թ. N 204-Լ՝ « ՀՀ Հանրային հատվածի ներքին աուդիտի ծառայության ձեռք բերման համար գնման հայտում ներառվող բնութագրի ներկայացվող պահանջները հաստատելու մասին» հրամանով սահմանված պահանջների՝ աուդիտի ոլորտում (ներքին և (կամ) արտաքին) մասնագիտական գործունեության առնվազն 5 տարվա փորձը փոփոխվել է 3 տարվա փորձի, իսկ «աուդիտորներից առնվազն մեկը պետք է ունենա գնումների համակարգողի որակավորման աստիճան,առնվազն մեկն էլ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման օրենսդրության իմացությամբ և հանրային հատվածի հաշվապահի որակավորման աստիճան» հատվածը հանվել է:

ՀՀ Ֆինանսների Նախարարի 15.07.2020թ. N 204-Լ՝ « ՀՀ Հանրային հատվածի ներքին աուդիտի ծառայության ձեռք բերման համար գնման հայտում ներառվող բնութագրի ներկայացվող պահանջները հաստատելու մասին» հրամանի թիվ 1 հավելվածի 5-րդ կետին (ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱՏԱՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ) համապատասխան հանվել է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմում և ենթակա կազմակերպությունների 2024 թվականի տարեկան ծրագիրը» աղյուսակում նշված «Աուդիտորական խմբի անդամների քանակը» սյունյակը:

Ընդունվում է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ:

2՝ Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները՝

Հանձնաժողովի նախագահ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ

Ա. Հակոբյան

Հանձնաժողովի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ՝

Ա. Համբարձումյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

Ս. Սաֆարյան

Հանձնաժողովի քարտուղար

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության ավագ մասնագետ

Ա. Պողոսյան